

թիւնն¹ սրբոյ տանն Աստուծոյ, մեծի եկեղեցւոյն կաթողիկէի², եւ զայնց վկայարանաց ճգնազգեցիկ երանելի կուսանացն. որոց գտեալք անարժան՝ ազգն Արշակունեաց յաղագս անարժան գործոց իւրեանց, ըստ բանի սրբոյ առն Աստուծոյ Ներսէսի՝ գտան եղեալք ընկեցիկք յերեսաց Աստուծոյ. մատնեցան ի բաժանումն թագաւորին Պարսից եւ Յունաց, որոց վիճակեալ երկոցունց զմեծ զաշխարհս Հայոց՝ բաժանեալ ծառայեցուցին:

2 Յաղագս որոյ յուղի անկեալ գնայր յԱյրարատեան գաւառէն որպէս ի գերութիւն Արշակ թագաւորն Հայոց. լաւ համարեցաւ երթալ զհետ սուղ սակաւ բաժնի յերկիրն հաւատացեալ, եւ կալ ի հնազանդութիւն Յունաց թագաւորին, քան թէ կալ ի փափուկ գաւառի այսպիսի վայելչութեանց, եւ տեսանել հանապազաւոր զայրանումն հաւատոց, զթշնամանս սուրբ եկեղեցւոյ, զնախատինս, զոր կրելոց էին պաշտաւնեայք աստուածային ուխտին յանաւրիկաց մոգուցն³, զթեթեւութիւն իւրոյ ազգին եւ զթագաւորութեան⁴ յամբարհաւաճ իշխանացն Պարսից տերութեանն⁵. ընտրելագոյն հաշուեալ անցուցանել զնուազ եւ զթուով ժամանակ կենցաղոյս այսորիկ քրիստոնէութեամբ ի խաղաղութեան, քան թէ սուտ փառաւք որպէս զարհամարհոտ կեցեալ աստ եւ վրիպեալ յաւիտենից կենացս՝ մատնիլ յայրումն անշէշ հորոյն յաւիտենից: 3 եւ խորհելով զայս ամենայն՝ յանկարծակի ի միտս իւր լքեալ տարակուսեալ⁶ զբարի ժառանգութենէ⁷ զնախնեացն իւրոց՝ գնայր ի ծառայութիւն թագաւորին Յունաց:

Թ.⁸ Իսկ յետ ժամանակի ինչ անցելոյ՝ բերեալ ատելութիւն նախարարացն Հայոց, որ ընդ Պարսից իշխանութեամբն էին, ընդ թագաւորին իւրեանց հոսորովու,- վասն երթալոյ տակաւին ի նուագումն⁹ թագաւորութեան յազգէն Արշակունեաց, յաղագս առաւելեալ ի նոսա գործոց իւրեանց չարաց, ըստ բանից սուրբ քահանայապետիցն առաջնոց եւ այլոց եւս բազում առաքինի արանց, որք անլուռ բերանով բողոք բարձեալ յանդիմանէին զանարժան գործս նոցա եւ զմատնումն¹⁰ ընդ լծով խիստ եւ անաւրէն ծառայութեանն Պարսից, եւ նախագոյն¹¹ բարբառէին,- երթեալ այնուհետեւ առնէին

1 Ձ. հիմն արկութիւնն

2 ՏՏ. չիք կաթողիկէի. Ձ. կաթողիկէի

3 ՏՏ. չիք մոգուցն

4 Ձ. եւ զթագաւորութեանց

5 Ձ. տեսութեանն

6 ԲԳտ. տարակուսեալ, լքեալ...

7 Ատ. լքեալ տարակուսեալ զբարի ժառանգութիւն

8 ԲՁ. լուսանցքում՝ Գլխ. Բ.

9 Ձ. ի նուագումն

10 Ձ. զմատնումն

11 Ձ. նախ՝ պարսից, նախագոյն. ապա ուղղուած՝ պարսից, նախագոյն